ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք.Ապարան 25 հուլիսի 2025թ. ժ.10:30

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ Ապարան համայնքի ղեկավար՝ Կարեն Եղիազարյանը:
ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ Ապարան համայնքի ավագանու 21 անդամներից 12-ը՝ Կարեն Մերուժանի Եղիազարյանը, Արկադի Գալուստի Կարապետյանը, Դավիթ Ռուբիկի Ենոքյանը, Աղաբեկ Սևակի Մանուկյանը, Աղվան Գեորգիի Երեմյանը, Գոո Հովհաննեսի Պետրոսյանը, Խաչիկ Հայկի Գեղամյանը, Արթուր Վանիկի Խալաթյանը, Կարեն Դավթի Կարապետյանը,Արարատ Աղվանի Ավդալյանը, Վարդան Ջավենի Մխիթարյանը, Վահան Կամոյի Մակարյանը:
ԲԱՑԱԿԱՅՈՒՄ ԷԻՆ ավագանու անդամներ՝ Հայկ Սամվելի Մեղրակյանը, Սևակ Աշոտի Սաֆարյանը, Հովհաննես Գալուստի Սահակյանը, Արշակ Սուրենի Սարգսյանը, Արման Արաքսի Ասատրյանը, Արտյոմ Անդրանիկի Դավթյանը, Սուրեն Սլավիկի Սարգսյանը, Արտյոմ Ռոբերտի Կարապետյանը և Ժորա Կոստանյանը:

Ավագանու նիստին մասնակցում էր զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը, նիստին ներկա էին աշխատակազմի ԿՄՍԵՍԱ բաժնի պետ Գ.Խաչատրյանը և գլխավոր մասնագետ Է.Միրզոյանը, տեսանկարահանում և առցանց հեռարձակումը ապահովում էր, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար՝ Մարիամ Քոչարյանը:

ԼՍԵՑԻՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

(զեկուցող՝ Կ.Եղիազարյան)

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

3.Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների բնակարանային ապահովման նպատակով՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքն անհատույց տրամադրելու/նվիրաբերելու/ մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

4.Ապարան համայնքի 2025թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

5.Ապարան համայնքի Ապարան քաղաքի Մ.Բաղրամյան փողոցի թիվ 26 հասցեում գտնվող համայքապետարանի շենքի դիմաց շատրվան տեղադրելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի Մշակույթի Կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի Ջարգանդ Դարյանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կազմում միացման ձևով վերակազմակերպելու, փոխանցման ակտը, միացման պայմանագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համյանքի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 12 , դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 110-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը ներկայացնելով հետևյալը, որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքում սկսել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը:Ապարան համայնքի 2025 թվականի բյուջեից հատկացնել 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:Սահմանել, որ առաջարկ-նախագիծը պետք է վերաբերվի Ապարան համայնքին և բխի համայնքի խնդիրներից և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններից:Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:Համայնքի ղեկավարին՝ 1)սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025 թվականի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում.2)համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել համայնքի ավագանուն. 3)իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 111-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
3. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ/ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ/ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը ներկայացնելով հետևյալը, որ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» 65-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով անհատույց տրամադրել /նվիրաբերել/ համայնքի սեփականություն հանդիսացող 02-002-0011-0001 կադաստրային ծածկագրից 0,35հա մակերեսով հողատարածք «Ամարաս» համահայկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11 , դեմ – 0, ձեռնպահ – 1, չի քվեարկել – 1
Պետրոսյան Գոռ Եղիազարյան Կարեն
ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ (Ավագանու N 112-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
4. ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ /ՏԱՊ/ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը ներկայացնելով հետևյալը, որ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջով.Ապարան համայնքի 2025թ. տարեկան աշխատանքային պլանում կատարել լրացումներ և փոփոխություններ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –12 , դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 113-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ
5. ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ Մ. ԲԱՂԲԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԴԻՄԱՑ ՇԱՏՐՎԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը ներկայացնելով հետևյալը, որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով հավանություն տալ Ապարան համայնքի Ապարան քաղաքի Մ. Բաղրամյան փողոցի թիվ 26 հասցեում գտնվող՝ 02-002-0672/0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,15հա հողատարածքում շատրվան տեղադրելուն: Համայնքի ղեկավարին դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական սեփականություն հանդիսացող հողատարածքում շատրվան տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 12, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 114-Ա որոշում)

5-ՐԴ ՀԱՐՑԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ ԼՔԵՑ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐՋԱՆԴ ԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄՅԱՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ, ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄՅԱՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Զեկուցեց Ապարան համայնապետարանի աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը ղեկավարվելով Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 15-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 63-64-65-րդ հոդվածների պահանջներով, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-38-րդ հոդվածների դրույթների, Ապարան համայնքում գործող մշակույթի կենտրոնի և գրադարանի ծառայությունների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, կառավարման հասանելիությունն ու վերահսկողությունն ակտիվացնելու, սպասարկման ծառայություններն ավելի նպատակային և օպերատիվ իրականացնելու նպատակով, հիմք ընդունելով միացման կարգով վերակազմակերպելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկություն .Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝49.210.00438) և ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի Ջարգանդ Դարյանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 49.210.00434) միացման կարգով վերակազմակերպել ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 49.210.00435) կազմում:

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ: Հաստատել՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի մշակույթի կենտրոն» և «Ապարան համայնքի Զարգանդ Դարյանի անվան գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը: Հաստատել՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի արվեստի դպրոց» ՀՈԱԿ և ՀՀ Արագածոտնի մարզի ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի մշակույթի կենտրոն» և «Ապարան համայնքի Զարգանդ Դարյանի անվան գրադարան» ՀՈԱԿ միացման պայմանագիրը: Համայնքապետարանի աշխատակազմին՝ ձեռնարկել համապատասխան աշխատանքներ ՀՈԱԿ-ի միացման և վերակազմակերպման գործընթացը պատշաճորեն կազմակերպելու և իրականացնելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ –11 , դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 115-Ա որոշում)

ԱՎԱԳԱՆԻ՝

Եղիազարյան Կարեն

Կարապետյան Արկադի

Պետրոսյան Գոռ

Ենոքյան Դավիթ

Երեմյան Աղվան

Խալաթյան Արթուր

Ավդալյան Արարատ

Մակարյան Վահան

Կարապետյան Կարեն

Մանուկյան Աղաբեկ

Մխիթարյան Վարդան

Գեղամյան Խաչիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ